ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հայց. Առաքելական Եկեղեցին իր երկու մեծ սրբությունները՝ հավատքը և հայրենիքը. միշտ էլ համարել է մեկը մյուսին փոխկապակցված. միմյանց ազդեցված, միմյանցով ապրող. միմյանցով շնչող իրողություններ:

Փետրվարի 19-ին, Վարդանանց տոնի օրը, Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագով մեկ անգամ ևս հավերժացվեց հայրենասեր հերոսների հիշատակը: Ս. Պատարագի ավարտին պատարագիչ Վազգեն վրդ. Միրզախանյանը սրբազան պատերազմի խորհուրդն արժևորող խոսք հղեց հավատացյալ ժողովրդին՝ վերջիններիս հոգում բորբոքելով հայրենասիրության, եկեղեցասիրության և ազգասիրության հուրը:

Օրվա գաղափարն ամբողջական դարձնելու նպատակն ուներ Գևորգյան ճեմարանի սաների կողմից պատրաստված այն հանդիսությունը, որը Պատարագի ավարտից հետո տեղի ունեցավ Գևորգյան ճեմարանի հանդիսությանց դահլիճում: Վարդանանց նվիրված այդ տոնակատարությունը, որին ներկա էին Մայրավանքի միաբանները, ողջ ուսանողությունը և հյուրեր, նախագահում էր Վիրահայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը: Տոնակատարությունն սկսվեց ներկաների միահունչ արտասանված Տերունական աղոթքով, որից հետո ճեմարանականները, խմբավար Ռուբիկ Շարբաթյանի ղեկավարությամբ հնչեցրին ՀՀ պետական հիմնը և Գևորգյան հոգևոր ճեմարանի օրհներգը:

Ցերեկույթի նպատակի, կատարված աշխատանքի մասին բացման խոսք ասաց Գևորգյան ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: Հայր սուրբը, դիմելով ներկաներին, մասնավորապես ասաց. «Այսօր կրկին անգամ հավաքվել ենք այս դահլիճում՝ տոնախմբելու հիշատակը Վարդանանց հերոսամարտի և պանծացնելու նրանց, ովքեր իրենց կյանքը տվին վասն Հիսուսի և վասն Հայրենյաց: Գևորգյան ճեմարանի համար գեղեցիկ ավանդություն է Վարդանանց տոնակատարությունը: Սրանից 30-40 տարիներ առաջ ոչ մի տեղ *Վարդանանք* չէր նշվում: Հոգևոր ճեմարանը կարծես թե դրոշակակիրն էր, միակ այն հաստատությունը, որտեղ Վարդանանց հիշատակը ամեն տարի անխտիր, մեծ եռանդով և ավելիով նշվում էր, որովհետև Մայր Աթոռը, Ս. Էջմիածինը, Հոգևոր ճեմարանը, մենք՝ բոլորս հավատում ենք այն նպատակին, որի համար Վարդանը և իր զինակիցները զոհվեցին:

Մենք այսօր ուրախ ենք կրկին անգամ, որ մեր սաները մի փոքրիկ հայտագիր են պատրաստել: Մենք ցանկացանք, որ իրենք իրենց ուժերով, հնարավորություններով կազմեին այս ծրագիրը: Հետևաբար այսօրվա հանդիսությունը համարում եմ բացված և հանձնում եմ իրենց, որպեսզի իրենք առաջնորդեն և պանծացնեն մեր սիրելի Վարդանանց հիշատակը»:

Տեսուչ Հայր սուրբի խոսքին հետևեց Ս. Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» անզուգական շարականի երգեցողությունը՝ երգչախմբի կատարմամբ, Զ լսարանի սան Արթուր սրկ. Հայրապետյանի ղեկավարմամբ: Վարդանանց էր նվիրված նույն լսարանի սան Մամիկոն Ավետիսյանի ընթերցած բանախոսությունը: Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծությունը

հոգեբուխ ոգևորությամբ ներկաների համար ասմունքեց Գ լսարանի սան Ներսես Կետիկյանը: Այնուհետև երգչախմբի կատարմամբ հնչեց մեկ այլ շարական՝ «Արեգակն արդարութեան»: Եղիշեի «Վասն Վարդանանց եւ Հայոց պատերազմին» գրքից «Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն...» հատվածը կարդաց Գ լսարանի սան Գևորգ Մակարյանը: Այս համարի կատարումից հետո երգչախումբը դահլիճում գտնվողների ուշադրությանը ներկայացրեց Մակար Եկմալյանի «Երգ մեռնող հայրենասերի» երգը՝ մենակատարմամբ Արթուր սրկ. Հայրապետյանի: Զորքին ուղղված Վարդան Մամիկոնյանի «Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիգակակիցք իմոյ» խոսքը՝ վերցված Եղիշեի Պատմությունից, ոգեշունչ կերպով արտասանեց Գ լսարանի սան Վարդան Իսախանյանը: Այնուհետև ներկաներն ունկնդրեցին Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» բանաստեղծությունը՝ Բ լսարանի սան Դավիթ Մարգարյանի կատարմամբ: Այս բանաստեղծությանը հետևեց վերջինիս հիմն վրա գրված Մակար Եկմալյանի համանուն ստեղծագործությունը: Հաջորդ բանաստեղծությունը՝ «Ավարայրում», որի հեղինակն է Գևորգյան նեմարանի դասախոս, բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանը, արտասանեց Գ լսարանի սան Հովհաննես Ամիրյանը: Ճեմարանականների պատրաստած ծրագիրն ավարտվեց երգչախմբի կատարմամբ հնչած Կոմիտաս վարդապետի «Ով հայկազուն» երգով:

Այնուհետև Տեսուչ Հայր սուրբը բեմ հրավիրեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբան Գեր. Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանին՝ օրհնության խոսք ասելու:

Սրբազանն իր ուրախությունն ու գոհունակությունը արտահայտելով ուսանողների պատրաստակամության, կազմակերպչական եռանդի համար, իր գովասանքի խոսքն ուղղեց բանախոսին՝ կատարած դժվարին ու հետևողական աշխատանքի համար, դաշնակահարին, խմբավարին և բոլոր սաներին: Սրբազան հայրը նշեց, որ ներկաների դեմքերից երևում է, թե որքան վայելեցին ձեր զգայուն, բայց մանավանդ այն սքանչելի երգերը, որոնք մատուցեցիք այս ցերեկույթի ընթացքում:

Անդրադառնալով Վարդանանց պատերազմին՝ Սրբազանն ասաց. «Այսքանով հանդերձ, մենք Վարդանանց տոնած չենք լինի, եթե 5-րդ դարից գոնե երկու հոգու մեր հիշողության մեջ չվերականգնենք՝ Ղևոնդ Երեցին և Վարդան Մամիկոնյանին: Վարդանանց սերունդը այս երկու բացառիկ հայորդիների առաջնորդության ներքո ստեղծեց այն սքանչելի բանաձևումները, թե մենք հայության հասկացողությունը չենք կարող ըմբռնել առանց Հայոց Եկեղեցու հավատի, և այս պատճառով է, որ մեր Եկեղեցին կոչվում է նաև Ազգային: Մեր Հայրը սուրբ Ավետարանն է, մեր մայրը՝ Հայց. Առաքելական սուրբ Եկեղեցին, որից կծնվենք, որից մեր հոգեխառնությունը կառնենք, և որից մեր դիմագծությունը կհստականա: Պետք է լավ խորհենք այս մասին, հասկանանք, որ սա մեզ համար լոկ ճառ չպետք է լինի, այլ առողջ գիտակցություն և կյանքի մեջ՝ կեցվածք: Սփյուռքի մեջ ես տեսել եմ, որ երբ հայը Եկեղեցուց կհեռանա, այն հայը, որ Եկեղեցու հավատից կդատարկվի, հայությունից էլ կդատարկվի: Կարող է բացառիկ մարդ լինել, կարող է ամենահաջող առևտրականը, վաճառականը դառնալ, բայց հայություն չկա՛, գնա՛ց: Հավատո՞ւմ ենք մենք 5-րդ դարից հաստատված այս ճշմարտությանը, ապրո՞ւմ ենք մեր կյանքում այդ կեցվածքով: Պիտի այս հարցին բոլորս պատասխան տանք, բայց մանավանդ պատասխան պիտի տա այն սերունդը,

որն ուսանել է Հոգևոր Նեմարանում, և Հայց. Եկեղեցու հավատին, շնորհին, իմաստությանն ու հզորությանն ամենից մոտն է, և ամեն օր նրա հետ շփում ունի:Հավատի պայքարի մեջ Վարդան Մամիկոնյանն իր զինվորը չտվեց, իր սպասավորին կամ իր նիզակակիցներից վատթարագույնին չուղարկեց, այլ առաջնորդվեց այն գիտակցությամբ, որ եթե սա հայոց հավատքի և հայրենիքի գերագույն պայքարն է, լավը զոհ պիտի գնա, ամենաարժանին պիտի զոհաբերվի զոհասեղանի վրա: Կարդացեք եղիշե. զոհերը՝ ազգից Մամիկոնյան, առաջին անունը Վարդանն է, ազգից Խոռխոռունյաց, առաջին անունը Խորեն իշխանն է, և այսպես հայոց ընտրանին: Խե՞նք էին, նրանք ռազմավարությունից լուր չունեի՞ն, այդ հսկա մեր զորավարները, որոնք Պարսկաստանի, Հայաստանի համար ամեն տեսակ հաղթանակներ էին տարել, չգիտեի՞ն, որ բաց դաշտի մեջ փղերի վրա չեն գնում: Գիտեին: Բայց իրենց հավատականությունն այն էր, որ Հայց. Եկեղեցին, Հայաստանը, հայ ժողովուրդը դառնան զոհասեղան ամենից լավին, ամենից մաքուրին, ամենից ընտիրին:

Այսօր բոլորդ հրավիրված եք իսկապես մեր ժողովրդի հերոսական կյանքի ամենից գեղեցիկ, ամենավեհ արտահայտություններից մեկին ներկա լինելու, որովհետև այդպես է՝ մեր ժողովուրդն այն հավատքն ունի, այն խոր բնազդական գիտակցությունն, որ ինքն այդ ուղու մեջ պիտի մնա, որ եթե այդ ուղուց դուրս գա, անպայման կթուլանա և կտկարանա»:

Ավարտելով խոսքը՝ Սրբազանն իր անկեղծ շնորհակալությունը հայտնեց Գևորգյան ճեմարանի տեսչությանը՝ այս հրաշալի տոնակատարության անցկացման համար, և հաջողություններ մաղթեց նեմարանականներին: Ցերեկույթն ավարտվեց «Հայր մերի» երգեցողությամբ:

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գևորգյան ճեմարանի Գ լսարան